ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆԸ «ՂԱՐԱԲԱՂ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ

(թերթի լույս ընծայման 80-ամյակի առթիվ)

Ս. Դ. ԱՎԱԳՅԱՆ

1910 թ. Շուշիում հիմնադրվում է Մելքոն Բաբաջանյանի տպարանը։ Այդտեղ լույս տեսնող առաջին պարբերականը «Ղարաբաղ» թերթն էր, որի առաջին համարը հրատարակվեց 1911 թ. նոյեմբերի 17-ին։ Թերթի հրապարակ դալու համար մեծ ջանքեր գործադրեցին և՛ Զավեն վարդապետը, և՛ բժիշկ Նիկոլայ Յարամիշյանը։ Ի դեպ, Ղարաբաղի թեմի առաջնորդ, Վարանդայի Գիշի գյուղացի Զավեն Մահտեսի Բաբայանը հրատարակչական գործի ջատագովներից մեկն էր, որի օրոք էլ Արցախում վերականգնվեց հայ պարբերական մամուլը՝ «Ղարաբաղ» թերթի հրատարակությամբ։

«Ղարաբաղը» նպատակ է դնում,— կարդում ենք առաջին համարի «Մեր կոչումը» խմբագրականում,— նախ և առաջ ուսումնասիրության ենթարկել հայրենի երկրի ու ժողովրդի կրթական, կուլտուրական և տնտեսական դրությունը, ճանաչել այդ ժողովրդի կարիքն ու ցավը և ապա նրա կյանքի բարվոքման թարգմանն ու ջատագովը լինել»։ Նշվում է նաև, թե ինչ սկզբունքով է առաջնորդվելու, ինչն է լինելու իր նշանաբանը։ «Յուր շուրջը խմբելով բոլոր սրտացավ հարազատ ժողովրդական տարրերին, «Ղարաբաղը» լինելու է անաչառ յուր մտրակումների մեջ, հեռու թայֆայական նեղսրտությունից։ Ճշմարտությունն ու արդարությունն են լինելու նրան առաջնորդողը և սկզբունք ունենալով «ամեն ինչ ժողովրդի համար» լայն նշանաբանը, լինելու է ազատ մտածող, առաջադիմական, բոլոր մղումներով շահագրգռված և լայն ժողովրդական դաղափարներով տոգորված գավառական օրգան»։

«Ղարաբաղ» եռօրյա թերթի 1911 թ. 13 և 1912 թ. 61 համարները վկայում են, որ պարբերականը հավատարիմ մնաց իր խոստմանը, շնորհիվ այն բանի, որ խմբագրվում էր հայտնի գրող Վրթանես Փափազյանի կողմից։ Ճիշտ է, ոչ մի համար չի կրում նրա ստորագրությունը, բայց համոզիչ փաստեր կան, որ երկու տարի նա է ղեկավարել թերթը։ Ահա հավաստող երկու փաստ։ Գաբրիել Լևոնյանին հղած մի նամակում Վրթանես Փափազյանը գրում է. «Սիրելի պ. Լևոնյան.

Ձեզանից դեռևս ոչ ես եմ ստացել «Գեղարվեստի» 4-րդ գիրքը, ոչ էլ «Ղարաբաղի» խմբագրությունը։ Եթե ուզում ես, որ ռեկլամ լինի գրքի մասին և տարածվի, ինձ թվում է, որ «Ղարաբաղին» էլ պիտի ուղարկեք։

Այս առիթով խնդրեմ մի կարծեք, որ ես եմ խմբագրում թերթը, ես և թերթը միևնույնն ենք...»։

Արցախի թեմական դպրոցի տեսուչ, բժիշկ Նիկոլայ Յարամիշյանը, որի ստորագրությամբ էր լույս տեսնում «Ղարաբաղ» թերթը, նույնպես վկայություն է տալիս այն մասին, որ Վրթանես Փափազյանը եղել է թերթի խմբագիրը։ «Մշակի» 1912 թ. հոկտեմբերի 6-ի համարում հրապարակված մի ինֆորմացիայում («Ղարաբաղ» թերթի խմբագրի դեմ դատ» վերնագրով) հայտնվում է, որ բժիշկ Ն. Յարամիշյանը միայն ի պաշտոնե է եղել խմբագիր-հրատարակիչ, իսկ թերթը փաստորեն խմբագրել է Վրթանես Փափազյանը։

Նշանավոր գրողն ու հրապարակախոսը թերթի շուրջ էր համախմբում բոլոր կարող ուժերը։ Նշենք Կոնստանտին Մելիք-Շահնազարյանին (հանրահայտ Տմբալչի Խաչանին)՝ իր ֆելիետոններով, երգիծական թղթակցություններով, այլև տեսական, մասնագիտական հոդվածներով։ Որ նրա աշ-

խատակցությունը «Ղարաբաղին» խիստ անհրաժեշտ էր, գրկայում է Զավեն վարդապետի՝ 1911 թ. օգոստոսի 31-ին գրած նամակը. «Սիրելի հայրենակիցս, ո՞վ չգիտե, որ մեր սիրելի հայրենիքի, գեղեցիկ Ղարաբաղի շահերը քո սրտին մոտ են։ Չեմ կասկածում, որ քո սիրտը ուրախ կբաբախի, եթե ասեմ, որ այդ սիրածոր հայրենիքի շահերին ու առաջադիմությանը նվիրված մի հայերեն «Ղարաբաղ» անունով թերթի հրատարակության հիմք ենք դրել, որի առաջին համարը լույս կտեսնի սեպտեմբերին։ Ավելորդ եմ համարում ասել, որ հենց առաջին համարում փայլելու է մեր հայրենիքի հարազատ զավակը և հայ գրականության մեջ յուր պատվավոր տեղը բռնած բոլորի սիրելին, մեր Տմբլաչին իր գեղեցիկ ֆելիետոնով»։

Միրզա Տեր—Սարգսյանը («Միտսար» ծածկանվամբ) ոչ միայն ստեղծագործում էր, հրապարակ հանում արձակ գործեր, այլև «Ղարաբաղի» էջերում տպագրում հոդվածներ և թղթակցություններ՝ նվիրված զավառի մշակութային կյանքի այլևայլ կողմերին, լուսավորական օջախների, ստեղծագործական ընկերությունների հիմնադրմանը։

Շուշիի հրատարակչական և դպրոցական գործերի, գրականության հարցերի մասին նյութերով հաճախ են «Ղարաբաղի» էջերում հանդես եկել Պետրոս Զաքարյանը, հայ օրիորդաց Մարիամյան—Ղուկասյան դպրոցի հայոց լեզվի և գրականության ավագ ուսուցիչ Հայկ Ստեփանյանը, Աբրահամ Գյանջեցյանը, մի մտավորական, որը երկար տարիներ աշխատում էր Շուշիի դպրոցներում, աշակերտների մեջ սեր պատվաստելով մայրենի լեզվի և գրականության նկատմամբ։

Արցախի տխուր առօրյան լուսաբանում էին երկրամասում համբավված ուսուցիչներ Տիգրան Տեր-Գրիգորյանը, Սուրեն Տեր-Գասպարյանը, Իվան Զոհրաբյանը և ուրիշներ։

«Ղարարաղի» խմբագիր Վրթանես Փափազյանը ձգտում էր նյութեր հրապարակել կյանքի տարբեր բնագավառներից՝ շեշտը դնելով աշխատավորության տնտեսական ծանր վիճակի ու դրա պատճառների վրա։ «Գավառական իրականությունը» խորագրի ներքո թերթը պատմում է այն մասին, որ հազարավոր ընտանիքներ զրկված են ապրուստի միջոցներից և հազիվ են պահպանում իրենց ֆիզիկական գոյությունը, որովհետև ամբողջ հարստությունը կենտրոնացած է մի խումբ մարդկանց ձեռքին։ Եվ պատահական չեն գավառում կատարվող գողությունները, թալանը, կողոպուտն ու մարդասպանությունը։ Արցախի աշխատավորության թշվառության պատճառներից մեկը թերթը համարում է հողազրկությունը։ Բարձրացնելով այս հարցը՝ նորաստեղծ տպագիր օրգանը քննադատական խոսքն ուղղում է մեծահարուստ հողատերերի դեմ, ովքեր հարստահարում էին հողազուրկներին։

«Ղարաբաղ» թերթի տեսադաշտը լայն էր, լուսաբանած հարցերը՝ բազմաթիվ։ Թերթն առանձին հոդվածներում արծարծում է տեսական հոդվածներ, որոնք մեծ նշանակություն ունեին անհատի և հասարակության փոխհարաբերությունը ճիշտ ըմբռնելու, ժողովրդական շահերը բարձր պահելու, երիտասարդ հասարակական գործիչներ աճեցնելու ասպարեզներում։ Արժեքավոր է մասնավորապես «Անհատականության սահմանը» ընդարձակ անստորագիր հոդվածաշարը, որը զետեղված է «Ղարարաղի» 1911 թ. նոյեմբերի 20-ի և հաջորդ մի քանի համարներում։ Ինքնանպատակ չէր սրա հրապարակումը։ Հայտնի է, որ ռեակցիայի տարիներին մտավորականների մի մասը հիասթափվել էր և կյանքի առաջխաղացման նշաններ չէր տեսնում։ «Այդ բանին ավելի ևս նպաստեցին հետհեղափոխության շրջանում հրապարակ հանված բազմաթիվ գրվածքները, որոնք անհատականության շունչ ու բուրմունք ունեին։ Եվ զարմանալի չէ, որ այդ գրվածքներով սնվող մեր երիտասարդ տարրը դարձավ անհատականության երկրպագու, յուր համար սեփական խեցի ստեղծեց և ներս քաշվելով պարփակվեց ինքը յուր մեջ, դադարեց քննադատության տակ դնել յուր գործողությունները, ավելորդ համարեց յուր անհատականը ու հասարակականը հաշտեցնելու մասին մտածել ու հոգալ։ Նա նույնիսկ գերագույն ու առաջնակարգ տեղ տվեց յուր

անհատականին, սկսեց ապրել միայն ու միայն յուր բավականության համար» (20. XI)։

Այնուհետև հոդվածագիրը նշում է, որ այս հանգամանքը վատ է անդրադառնում ոչ միայն հասարակական կյանքի, այլև «հասարակական հաստատությունների առաջխաղացման վրա»։ Միաժամանակ հիշատակվում են պատմական տարբեր ժամանակահատվածներում հանրօգուտ մեծ գործ կատարած անհատները։

Անդրադառնալով անհատի դերին, նրա ստեղծագործական կարողությունների համամարդկային նշանակությանը, թերթն ընդգծում է անհատի և հասարակության գործողությունների փոխպայմանավորվածությունը, անհատականի և հասարակականի փոխներգործությունը։ Այս միտքը հանգեցվում է նրան, որ անհատն անհատ է այնքանով, որքանով առնչվում է հասարակությանը, ապրում նրա առաջընթացի գաղափարներով։

«Ղարաբաղը» խարազանում է այն անձնավորություններին, ովքեր հեռացել են իրական կյանքից, չեն մտածում ժողովրդի մասին, անձնականը բարձր են դասում հասարակականից։ Հայ մտավորականներին կոչ է արվում ունենալ սեփական հայացք, սկզբունք, հեռու մնալ «անձնական հախուռն բավականությունից, որովհետև այդ է պահանջում հասարակական գործը, այդ է պահանջում մեզ համար միսիա դարձած գործը» (20. XI)։

Վ. Փափազյանը տեսնում էր, որ 1911—1912 թթ. բարոյական անկում էր ապրում ոչ միայն մտավորականը, այլև գյուղացին։ Եվ սա մասամբ բացատրվում է աշխատավորների գլուխ կանգնած տխմար ղեկավարների ապաշնորհությամբ, անճարակությամբ։ Թերթի 1912 թ. մայիսի 24-ի համարում լույս տեսած «Տխուր է պատկերը» ծավալուն թղթակցությունը նշում է, որ ամենուրեք նկատվում է ժողովրդի հավատի կորուստ. «Ամեն անգամ, երբ հայացք ենք ձգում մեր հասարակական կյանքի վրա, միշտ մի տխուր զգացմունք համակում է մեր սիրտն ու հոգին, որովհետև անմխիթար բան շատ ենք տեսնում այնտեղ։ Տարիներն անցնում են տարիների ետևից, և վատ սովորություններ են միայն ժառանգություն մնում մեզ։

Սոսկումով նկատում ենք գյուղական ժողովրդի բարոյական անկումը. տեսնում ենք, թե ինչպիսի այլասերման է ենթարկված հասարակությունը իր խղճուկ ղեկավարների պատճառով»։

Թերթը հարց է տալիս. «Արդյո՞ք, բարոյապես պատասխանատու չե՞նք ապագա սերնդի առաջ, որի բարոյական բարձրացումն ու կենսունակությունը մեզնից է կախված»։

«Քաղաքական» խորագրի ներքո թերթը քննադատում է երիտթուրքերի վարած քաղաքականությունը, շեշտելով, որ Թուրքիան փոքր ժողովուրդների, հատկապես հայերի համար լավ բան երբեք չի անի։ Ահա թե 1912 թ. հուլիսի 15-ի համարում ինչ է գրում «Ղարաբաղը». «Երբ տեղի ունեցավ երիտասարդ թուրքերի շարժումը և Տաճկաստանը սահմանադրական երկիր հռչակվեց, կային միամիտներ, որոնք կարծում էին, թե իսկապես երկիրը հիմնովին կբարեկարգվի և հպատակ ազգերի իրավունքները կհավասարվեն։ Անցել է հինգ տարի սահմանադրության հաստատումից հետո, և Ադանայի կոտորածներին ահա թե ինչ կարգեր են հաջորդում...

Հայաստանի մի քանի դժբախտ կողմերում հայ գյուղացին խաֆիրական տուրք պիտի տա քուրդ բեկերին և աղաներին... Բացի դրանից, հայ գյուղացին իրավունք չունի իր աղջկան ամուսնացնելու առանց բեկի համաձայնության և որոշ տուրք տալու... Այս բոլորից հետո մի՞թե պարզ չէ, որ Տաճկաստանի սահմանադրությունը միայն անվանական է, թղթի վրա»։

Առանձին փոքրիկ հաղորդումներ հայտնում են տեղական թուրքերի շարունակվող խժդժություններ մասին։ 1912 թ. հունիսի 30-ի համարում, օրինակ, ասվում է, որ նրանք Աղդամի շուկայում ձերբակալել են շուշեցի Վոլոդյա Գասպարյանին։

Թերթն անդրադառնում է Շուշիի գավառում հայերի և թուրքերի թշնա-

մական հարաբերություններին՝ չտեսնելով դրանից դուրս դալու որևէ երաշխիք։

Վրթանես Փափազյանը և թերթի հեղինակները տարբեր առիթներով նշում են, որ գավառի դրությունը ծանր է ոչ միայն տնտեսապես, քաղաքականապես, այլև լուսավորության բնագավառում։ Հենց առաջին համարում տպագրված «Թերթը և կրթական գործը», «Թերթը և հայ ուսուցչությունը», ու այլ հոդվածներում, թղթակցություններում ընդգծվում է կրթության, մատաղ սերնդի դաստիարակության, ընդհանրապես այդ բնագավառներում պատասխանատվության բարձրացման կարևորությունը։ Հայրենակից ուսուցիչներից պահաջվում է խոր զգացումով և սրտացավությամբ մոտենալ հանձնարարված գործին, ապրել լիարժեք քաղաքացիներ պատրաստելու մտահոգությամբ։ Մեկ մեջբերում. «Ըստ երևույթին բոլոր հայ ուսուցիչները գիտեն, որ չկա մի այլ ասպարեզ, քան ուսուցչականը, ուր մարդ անհատը այնքան պատասխանատվության ենթակա լինի թե՛ հասարակական կարծիքի և թե՛ հենց իր սեփական խղճմտանքի առջև. չկա ավելի ծանր և դժվարին պաշտոն, քան ուսուցչականը։

Ստանձնելով այդ վեհ պաշտոնը, մարդն իր մեջ պիտի զգա կոչում, սեր և պատրաստություն. նա պիտի իր կատարած աշխատանքից որոշ բավականություն ստանա և ոչ թե ձանձրույթ. նա պիտի գոհունակությամբ և լրջությամբ կատարի իր սրբազան միսիան՝ մատաղ սերնդին դաստիարակելու պատասխանատու դործով, հակառակ դեպքում անօգուտ կանցնեն նրա թափած ջանքն ու ճիգերը»։

Թերթն անհանգստություն է հայտնում նաև դպրոցական գործում եղած աչքակապությունների առթիվ, հրապարակում դպրոցներում աշակերտների գիտելիքները գնահատելու մի քանի տխուր փաստեր, շեշտում, որ հոդվածները չեն մտածում աշակերտների քննությունները կամոնավոր անցկացնելու մասին, առանձին ուսուցիչներ քննությունը վերածում են յուրօրինակ խաղի։ Միաժամանակ նշվում է, որ հատկապես 1912—1913 ուսումնական տարում աշխուժացել է դպրոցական առօրյան։ Միայն Շուշիում գործում են հայոց հոգևոր թեմական դպրոցը՝ 300, Մարիամյան-Ղուկասյանը՝ 250 աշակերտով, եկեղեցական-ծխական մեկդասյա դպրոցներ՝ Ագուլեցոց մայր եկեղեցու զավթում (60 աղջիկ և տղա), Մեղրեցոց եկեղեցու գավթում (70 երեխա), Թադևոսյանը՝ 120, քաղաքայինը՝ 250, ռեալականը՝ 400 աշակերտով։ Շուշիում գործում էին նաև ռուսաց օրիորդաց դպրոցը՝ 100-ից ավելի աշակերտուհիով և մի մասնավոր տարրական դպրոց՝ 60 աշակերտով։

Թերթի խմբագիր Վրթ. Փափազյանը ոչ միայն ստեղծագործում էր, այլև դասավանդում էր Շուշիի թեմական և օրիորդաց դպրոցներում։ Նրա սրտին շատ հարազատ էին դպրոցական հարցերը, և նա ձգտում էր պարբերականում պատշաճ տեղ հատկացնել ուսումնական առօրյային։

«Ղարաբաղ» թերթում հաստատուն ուշադրություն էր հատկացվում «Գեղարվեստ» բաժնին։ Շատ անգամ է թերթը տպագրել գրական գործեր, գրականագիտական հոդվածներ, գրախոսություններ, հուշեր և այլն։ Ընթերցողը թերթի հենց առաջին չորս համարներում «Գրական ակնարկներ» խորագրի տակ կարդում է Վ. Փափազյանի ծավալուն հոդվածը գրական ստեղծագործությունների արժեքավորման չափանիշների, գնահատման մասին։ Հեղինակը չորս մասից բաղկացած հոդվածաշարում ձգտում է ճշմարտացի ու ինքնատիպ պատասխանել մի քանի հարցերի, որոնք հուզում էին գրական հասարակայնությանը։ Ամենից առաջ նա խոսում է ազնվության, առողջ քննադատության մասին։ Վրթ. Փափազյանը տանել չէր կարողանում գրական աշխարհը ստվերող և արատավորող գրողներին։ Նա ուղղակի գրում է. «Ով ասես, որ գրիչ ձեռք չի առնում և, իրենից առաջ եղածները սրբել-ջնջելու մտքով, ապշեցուցիչ հանդգնությամբ և անպատկառ լեզվով չի տղմոտում թե՛ գործ, թե՛ գործիչ և թե՛ ազնվությամբ գործելու ամեն ցանկություն ...Մամուլի ներկայացուցիչ ու խմբագիր է դառնում, օրինակ, երեկվա ծաղրածուն, որպեսզի այսօր, ոսկյա հորթի առաջը գետնատարած,

գնա ուրիշի գրչի ադյունքները, և հասարակական-գրական գործչի հավակնություններով, վարկաբեկի գրականությունն ու ապականե գրական բարքերը։ Երեկվա անբարոյականն ու հրապարակով խաթարվածը՝ այսօր բարոյախոսական ճառեր է հնչեցնում... գրական ամեն ասպարեզից զզվանքով կամ ծաղրով ետ մղված parvenu-ները այսօր «մենք գրողներս» են կոչում իրենց և անցյալ մեծություններն իսկ ճգնում են վարկաբեկել»։

Թերթը Փափազյանի գրչով խստիվ քննադատում է այն վայ-գրականագետներին, որոնք կարող են միայն գռեհկություններ դուրս տալ, վարկաբեկել բարի անուն վաստակած գրողներին։ Գրականության մեջ ամեն ինչ պետք է լինի զեղեցիկ, մաքուր, մարդկային։ Վարկաբեկելու ուղին բռնած մարդիկ իրավունք չունեն խոսելու գրականության անունից։ «Գրականություն չէ դա այլևս, ո՞չ գրական շարժում, ո՞չ էլ մտավոր. իրար ուղղված, լուտանքներով լի սավաններ են ուղարկվում մեզ և այդ սավանների մեջ ամեն ինչ տրեղ է, ամեն ինչ հեռու է գեղեցկագիտության որևէ նշույլից. մինչ գռեհիկ արտահայտությունների և ցուցադրությունների տակից երևում են միմիայն անմաքուր հաշիվներ և վսեմ բաները լզճորելու գործունեություն»։

«Գրական ակնարկների» մեջ հեղինակն առաջին հերթին անդրադառնում է Ավետիք Իսահակյանի, իբրև տաղանդաշատ դրողի և մեծ արվեստագետի, ստեղծագործություններին, մասնավորապես հռչակավոր «Աբու Լալա-Մահարի» պոեմին։ Խոսելով գրականության մեջ Ավ. Իսահակյանի տեղի և գերի մասին, Վրթ. Փափազյանը գրում է. «Դա այն երգիչն է, որ ժողովրդին է տվել «Որսկան տիպեր», «Մաճկալ ես, բեռաբաց ես» և նման մի շարք գոհարներ, որ հայ նորագույն գրականությունն է հարստացրել իր փոթորկող ոգու, իր զգայուն սրտի տրտունջներովն ու մրմունջներով, ըմբոստացող իր զդալումներով, տենդոտ վարանումներով և ընարական թախծոտ երգերով»։

Հովհաննես Հովհաննիսյանին նվիրված հատուկ հոբելյանական հոդվածով «Ղարաբաղը» 1912 թ. մայիսի 20-ին և 24-ին պատմում է այն մասին, որ Կովկասում լույս տեսնող առանձին պարբերականներ հարգալից վերաբերմունք հանդես չեն բերել նշանավոր բանաստեղծի նկատմամբ, փորձել են նվազեցնել նրա գրական արժանիքները։ Այդպիսիներից էր, օրինակ, «Մշակը», որը «Հովհաննիսյանի քնարը չափազանց էրոտիկ ու ասիական» էր համարել, իսկ Բաքվի «Նոր կյանք» երկշաբաթաթերթը (հոդվածի հեղինակ՝ Դ. Անանուն) 1912 թ. № 3—4-ում Հովհաննիսյանին անվանել էր քաղքենիության բանաստեղծ։ Թերթի եզրակացությունն այս է. «Հովհաննիսյանը ռերիկ է, քնարերգու... Ընդհանրապես՝ նրա ստեղծագործությունը նման է մի մարգագետնի, մի հարթ գմբուխտ կանաչով ծածկված մարդագետնի, որի միջով հեզիկ խոխոջով հոսում է առուն, որի ձայնը տեղ-տեղ հեկեկանքի է նման, շուրջը ծլվլում են սիրո կարոտով սոխակները, տեղ-տեղ առուն խորդուբորդությունների է հանդիպում և թեթև չափով փրփրում ու բողոքում»։

«Ղարաբաղը» դրվատական խոսք է ասում Գևորգ Դոդոխյանի մասին, որի «Միծեռնակ» բանաստեղծությունը մեծ ժողովրդականություն էր վայելում հայկական շրջանակներում։ Արժեքավոր էին թերթի էջերում տպագրված հոդվածները Գաբրիել Սունդուկյանի, Ղազարոս Աղայանի, Պերճ Պռոշյանի և այլ գրողների մասին։ Մի խոսքով, Վրթ. Փափազյանի խմբագրած թերթում գրական կյանքը լուսաբանվում էր անհրաժեշտաբար, կյանքի կարևորագույն հարցերին առնչված։

«Ղարաբաղը» լրջորեն անդրադառնում էր մամուլի հարցերին, քննադատական խոսք ուղղում տպագիր այն օրգանների հասցեին, որոնք անունով աշխատավորական էին, բայց իրականում՝ ոչ։ Այդպիսիներից էին 1910 թ. Նոր-Նախիջևանում հրատարակվող «Լույս» գրական-հասարակական շաբաթաթերթը, 1911-ից Մոսկվայում լույս տեսնող «Մարտ» գրական երկշաբաթաթերթը և ուրիշներ։ Ծաղրելով «Մարտի» խմբագիր-հրատարակիչ Արշակ Թումանյանին՝ «Ղարաբաղը» ընդգծում է նրա անփառունակ դերը ոչ

միայն պարբերական մամուլում, այլև հայ հասարակական կյանքում։

«Ղարաբաղն» իր էջերը տրամադրում էր նաև արտասահմանյան լուրերին, ընթերցողներին տեղեկացնում, օրինակ, թե նշանակալի ինչ երևույթներ են տեղի ունենում Գերմանիայում, Չինաստանում, Իտալիայում, Թուրքիայում, Պարսկաստանում և այլուր։

Թերթն արձագանքում էր Շուշիի նորություններին, իրադարձություններին։ Պարբերաբար լուրեր էին տրվում այն մասին, թե առանձին մարդիկ բարեգործական ինչ աշխատանք են կատարում հայրենի երկրի և ժողովրդի համար։ Հանդիպում ենք, օրինակ, այսպիսի փաստի. «Հաստատ աղբյուրից տեղեկանում ենք, որ թեմական դպրոցի 75-ամյա հոբելյանի առթիվ հայ հայտնի հրապարակախոս-պատմաբան պ. Լեոն ուրախությամբ է հանձն առել գրելու իր հայրենիքի կրթության այդ յոթանասունհինգամյա հաստատության պատմությունը»։ Չէր մոռացվում գյուղատնտեսական, առողջապահական կյանքը։ «Ղարաբաղ» թերթի էջերում տպագրվում էին հուշեր, հրապարակախոսական և ճամփորդական նյութեր, որտեղ ներկայացվում էին որոշ մարդկանց կյանքի չլուսաբանված առանձին դրվագները։ Ի դեպ, այստեղ է լույս տեսնում (1912 թ. № 11) Պերճ Պռոշյանի «Մանկական հուշատետրից» գործը, որը հետաքրքիր մանրամասնություններ է բովանդակում և՛ գրողի, և՛ տվյալ ժամանակաշրջանի վերաբերյալ։ Թերթում տպագրված տեսական հոդվածները ընդգրկում էին նաև առանձին հարցեր անհատի և հասարակության փոխհարաբերության վերաբերյալ, փորձելով ցույց տալ անհատի դերը մարդկության պատմության մեջ։

Հեշտ չէր, իհարկե, հայ պարբերականի անցած ուղին։ Այն լույս էր տեսնում երկու-երեք օրը մեկ՝ ոչ պարբերաբար։ Դրան խանգարում էին երկու հանգամանք՝ ցարական դաժան գրաքննությունը և նյութական սուղ պայմանները։ Թերթը հիմնականում հրատարկվում էր հանգանակության միջոցներով։ 1912 թ. հուլիսին թերթի ընդհատումը մեծ հարված էր Արցախի աշխատավորությանը։ Շուրջ երկու տարի հայկական երկրամասում լույս չէր տեսնում որևէ հայատառ պարբերական, որը ինչպես հարկն է, շարունակեր «Ղարաբաղի» գործունեությունը, հանգամանորեն լուսաբաներ գավառի առօրյան, նրա ցավոտ հարցերը։ Եվ միայն 1915 թ. հիմնադրվում է «Փայլակ» թերթը՝ Լևոն Վարդապետյանի ջանքերով։

Ինչևէ, «Ղարաբաղը» երկու տարվա ընթացքում ծառայեց իր կոչմանը, լուսաբանեց երկրամասի առօրյան, մարդկանց մղեց արդար պայքարի՝ դուրս գալու լուսավոր ափեր։ Եվ այսօր էլ կարծես հնչում է «Ղարաբաղի» ձայնը՝ սիրել գեղեցիկ լեռնաշխարհը, աննման Արցախը, տեր կանգնել նրա հողին, ջրին, մարդկանց, պայմաններ ստեղծել նրանց բարեկեցության ու զարգացման համար։

ВРТАНЕС ПАПАЗЯН—РЕДАКТОР ГАЗЕТЫ «КАРАБАХ»
(к 80-летию со дня выход газеты)

С. Д. АВАКЯН

Резюме

В 1910 году в Шуше (бывший центр Карабаха) была основана армянская типография. Первым периодическим изданием, вышедшим в свет, была газета «Карабах» (первый номер вышел 17 ноября 1911 г.). Редактором газеты был известный писатель Вртанес Папазян, а издателем—Николай Ярамишян, по специальности—врач. В 1911—1912 гг. газета «Карабах» выпустила 74 номера, которые многосторонне освещали будни армянского края.

Активно сотрудничали с газетой фельетонист Тмблачи Хачан (К. Мелик-Шахназарян), Аракел Аракелян, писатели Мирза Тер-Саркисян, Григор Нерсисян, Левон Атабекян, Акоп Ханларян, педагоги Тигран Тер-Григорян, Абраам Гянджецян и другие.